



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԸ ԹՎԵՐՈՎ, 2001-2005

Վիճակագրական ժողովածու

ԵՐԵՎԱՆ - 2006

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ) շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները, խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժին:

*0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3*

*Հեռախոս (374 10) 52-33-56, 52-42-45*

*Ֆաքս (374 10) 52-19-21*

*Էլ փոստ [info@armstat.am](mailto:info@armstat.am)*

*ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջ <http://www.armstat.am>*

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2006թ.

**Վիճակագրական ժողովածու**

Սույն ժողովածուն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության առավել ամբողջական վիճակագրական հրապարակումն է, որն արտացոլում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը 2001-2005թթ. միջակայքում՝ Հայաստանի Հանրապետության մարզերի կտրվածքով:

1995 թվականից՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն, հանրապետության տարածքը բաժանված է 11 մարզի, այդ թվում ք. Երևանը՝ մարզի կարգավիճակով:

Հայաստանի Հանրապետությունում առկա են 47 քաղաքներ և 951 գյուղական բնակավայրեր, որոնցից 9-ը ներառված են քաղաքային համայնքների կազմի մեջ, իսկ մնացած գյուղերը՝ 870 գյուղական համայնքներում:

Սույն հրապարակումը նախատեսված է վիճակագրական տեղեկատվություն սպառողին (օգտագործողին) ներկայացնել մանրամասն վիճակագրական տեղեկատվություն տարածաշրջանային (ռեգիոնալ) կտրվածքով:

Ժողովածուն նախատեսված է ընթերցողների լայն շրջանի համար:

Նախկինում հրապարակված որոշ ցուցանիշներ սույն հրապարակման մեջ ճշգրտված են:

**Պայմանական նշաններ**

« - »	երևույթը բացակայում է
«...»	տվյալները բացակայում են
«0.0»	չնշին մեծություն
« * »	տվյալները ճշգրտված են

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքի միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

**Համառոտագրություններ**

մ	մետր
մ <sup>2</sup>	քառակուսի մետր
մ <sup>3</sup>	խորանարդ մետր
կմ	կիլոմետր
կմ <sup>2</sup>	քառակուսի կիլոմետր
կգ	կիլոգրամ
տ	տոննա
հա	հեկտար
հազ.	հազար
մլն.	միլիոն
մլրդ.	միլիարդ
կՎտ	կիլովատտ
տոննա-կմ	տոննա-կիլոմետր
%	տոկոս
մ.թ.ա.	մեր թվարկությունից առաջ



Հայաստանը, որպես հնագույն քաղաքակրթության բաղկացուցիչ մաս, հայտնի է պատմությանը վաղագույն ժամանակներից:

Մ.թ.ա. IV-II դարերում հայաբնակ շրջանները բաժանված էին երեք խոշոր վարչական միավորի՝ Փոքր Հայք, Ծովք և Մեծ Հայք, որոնք արդեն մ.թ.ա. II դարում դարձան անկախ պետություններ: Դրանց մեջ ամենից զորեղը Մեծ Հայքի պետությունն էր, որտեղ մ.թ.ա. II դարից մինչև մ.թ. V դարը նախ թագավորում էին Արտաշեսյանները, ապա Արշակունիները:

Մեծ Հայքը բաղկացած էր 15 «աշխարհներից», որոնք բոլորը միասին ունեին 191 գավառ: Այդ «աշխարհներն» էին. Տայք, Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորճեք, Մոկք, Պարսկահայք, Փայտակարան, Արցախ, Ուտիք, Սյունիք, Գուգարք, Տուրուբերան, Վասպուրական և Այրարատ, որը ամենահայտնի «աշխարհն» էր, որպես քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոն:

Նոր և նորագույն ժամանակներում պատմական Հայաստանի տարածքը բաժանված էր արևմտյան և արևելյան հատվածների, որոնք ընդգրկված էին Օսմանյան Թուրքիայի և Իրանի (1828 թվականից Ռուսաստանի) կազմում:

Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքը բաժանված էր 37 շրջանների:

Հայաստանի Հանրապետության ներկա վարչատարածքային բաժանումը՝ 10 մարզ և Երևան քաղաքը մարզի կարգավիճակով, ձևավորվել է 1995 թվականին՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի: